ԿԱՄՔ, ՆՎԻՐՈՒՄ, ԱՇԽԱՏԱՆՔ 2017

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ

ՀԱԿՈԲ ՍՈՒՐԵՆԻ ԲԱԼԱՍՅԱՆ

2008-2017թթ. կատարված աշխատանքների համառոտ պատկերը

-Հիմնանորոգվել և հանգստի գոտու է վերածվել քաղաքային զբոսայգին.

-Արզնի խաչմերուկից Բյուրեղավան քաղաք մտնող ճանապարհը ասֆալտապատվել և լայնացվել է.

-Հիմնանորոգվել է փոստային բաժանմունքը.

-Ամբողջությամբ լուծվել է քաղաքի լուսավորության հարցը.

-Գազիֆիկացվել և ոռոգման ջրով ապահովվել է <<Հայրենադարձ>> թաղամասը.

-Լուծվել է քաղաքային պոլիկլինիկայի ջեռուցման, ջրամատակարարման և ջրահեռացման հարցը, փոխվել են դռներն ու պատուհանները

-2012թ. դեկտեմբերին Համաշխարհային բանկի և համայնքապետարանի միջոցներով ավագ դպրոցին կից բացվել է նախակրթարան՝ 100 երեխայի համար.

-Վերաբացվել է հիմնանորոգված «Արև» մանկապարտեզը, որտեղ այսօր հաճախում են 140 երեխաներ.

-2013թ. սկսվեց ու շարունակվում են Սբ. Մարիամ Աստվածածին եկեղեցու շինարարական աշխատանքները: Քաղաքը կունենա 160 քմ սրահով, 27 մ բարձրությամբ ծիրանագույն տուֆից կառուցված եկեղեցի.

-Բակերում կառուցվել են խաղահրապարակներ, տեղադրվել են հարմարավետ զրուցարաններ և երեխաների համար կարուսելներ.

-Հայոց Մեծ եղեռնի 100-րդ տարելիցի կապակցությամբ համայնքապետարանի բակում բացվել է հուշաղբյուր.

-2014թ. մարտից գործում է Բյուրեղավանի համայնքապետարանի և Ամերիկայի արևելյան թեմի հայ առաքելական եկեղեցու Հայ օգնության ֆոնդի հետ /FAR/ համատեղ բացված բարեգործական ճաշարանը՝ 150 շահառուի համար.

-2013թ. հիմնովին փոխվել են հին ջրագծերը: Բարելավվել է խմելու ջրի որակը .

-2013թ. հունիսից սկսվել է քաղաքի հանրակացարանների սեփականաշնորհման գործընթացը, որը շարունակվում է մինչ օրս.

-2015թ. աշնանը Հայաստանի շախմատի ակադեմիայի հետ համագործակցության արդյունքում բացվել է շախմատի դպրոց՝ անվճար ուսուցմամբ.

-Սկսվել է մշակույթի տան հիմնանորոգումը: Ավարտելուց հետո այն կդառնա արվեստի կենտրոն, ուր կտեղափոխվեն Բյուրեղավանի արվեստի և շախմատի դպրոցները, գրադարանը.

-Սկսվել են քաղաքային պուրակի կառուցման աշխատանքները. նախատեսվում է կառուցել տարեցների ակումբ, հուշաղբյուր, հասարակական զուգարան և հանգստի գոտիներ.

-Կատարվել են մեծ ծավալով ծառատնկման աշխատանքներ.

-Հստակ գրաֆիկով կատարվում են սանմաքրման և աղբահանության աշխատանքները: Բյուրեղավան համայնքն արժանացել է «ՄԱՔՈՒՐ ՀԱՄԱՅՆՔ 2016 » անվանակարգով մրցանակին.

-Մշտապես ցուցաբերվում է աջակցություն միայնակ թոշակառուներին, բազմազավակ և սոցիալապես անապահով ընտանիքներին, Հայրենական պատերազմի վետերաններին, արցախյան ազատամարտում զոհվածների ընտանիքներին ու մասնակիցներին.

-Կազմակերպվել են համաքաղաքային մարզամշակութային միջոցառումներ՝ նվիրված պետական, հոգևոր տոներին: Արվեստի և մարզադպրոցի սաները ակնառու հաջողությունների են հասել միջազգային, հանրապետական, մարզային փառատոներում և մրցաշարերում.

-Համայնքապետարանի աշխատանքները հանրության առջև բաց են ու թափանցիկ և մշտապես լուսաբանվում են լրատվամիջոցներով: Գործում են Byureghavan.am, byureghavan-kotayq.am կայքերը, ֆեյսբուքյան պաշտոնական էջը, որտեղ ներկայացվում են քաղաքում կատարվող բոլոր իրադարձությունները: 2016-ից գործում է ԹԵԺ ԳԻԾ:

Հարգելիներս

Կատարված աշխատանքները բնականաբար բավարար չեն: Այսօր էլ դեռևս կան շատ չլուծված խնդիրներ, որոնց լուծումը պահանջում է տքնաջան, հետևողական աշխատանք և անմնացորդ նվիրում: Վստահ եմ, որ համայնքների խոշորացման ծրագրերի իրականացմանը կհաջորդեն սերտ համագործակցություն և փոխադարձ վստահություն, ինչը կնպաստի համայնքի համաչափ զարգացմանը:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

-ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ, ՆՈՒՌՆՈՒՍ, ՋՐԱԲԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ) ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ .

-ԽԹԱՆԵԼ ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ, ՆՊԱՍՏԵԼ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ԲԱՑՄԱՆԸ.

-ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԸ.

-ՆՊԱՍՏԵԼ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆԸ.

-ԱՎԵԼԱՑՆԵԼ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԽՄԲԵՐԻ ԹԻՎԸ.

-ԱՎԱՐՏԻՆ ՀԱՍՑՆԵԼ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԵՎ ՊՈՒՐԱԿԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

-ՎԵՐԱՆՈՐՈԳԵԼ, ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵԼ ԽՄԵԼՈՒ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՑԱՆՑԵՐԸ.

-ԱՋԱԿՑԵԼ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԳԱԶԻՖԻԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ.

-ԲԱՐԵԿԱՐԳԵԼ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ.

-ԱՋԱԿՑԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆՆ ՈՒ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆԸ, ԱՌԱՆՁՆԱԿԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁՆԵԼ ՄԱՏԱՂ ՍԵՐՆԴԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ.

- ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ.

-ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ՝ ԱՌԱՆՁՆԱԿԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁՆԵԼՈՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ.

- ՄԵԾԱՐԵԼ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՎԱՆԴ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԴԿԱՆՑ.

-ԱՊԱՀՈՎԵԼ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ:

Իմ խորին համոզմամբ՝ բոլոր ծրագրերի իրագործմանը կարող ենք հասնել միայն համատեղ ուժերով՝ շարունակելով պահպանել վերջին տարիների ընթացքում ձևավորված բարի ավանդույթները: Վստահ եմ՝ միասնական ուժերով մենք հասնելու ենք առավելագույնին:

ՄԵՐ ՀԱՄԱՅՆՔՆ ԱՌԱՋԻԿԱ ՏԱՐԻՆԵՐԻՆ ՏԵՄՆՈՒՄ ԵՄ ԱՎԵԼԻ ԶԱՐԳԱՑԱԾ, ԲԱՐԵԿԱՐԳ, ՀԱՄԵՐԱՇԽ ԵՎ ՄԻԱՄՆԱԿԱՆ:

ԿԱՄՔ, ՆՎԻՐՈՒՄ, ԱՇԽԱՏԱՆՔ